

d'elle le guide vers lequel se tournent toujours les peuples qui s'interrogent sur le destin de la liberté. La France a porté le sens de l'humain jusqu'aux limites même de l'humanité. Aussi pouvez-vous compter sur elle.

Aux jeunes arméniens qui m'écou- tent et au-delà de cette salle, à tous ceux qui sont répandus à travers le monde, je dis avec force: Restez fidèles à cet idéal. Ayez foi en l'avenir. L'a- venir appartient à ceux qui luttent. Ne désespérez jamais.

Ecoutez ceci, mes jeunes amis. Il y a un peu plus d'un siècle, dans mon lointain pays, aux Antilles, des hommes appartenant à un élément d'humanité que je connais bien, étaient courbés sous le joug de la servitude. Aux heu- res de répit, ils chantaient: « La mon- tagne est verte ». - Ils exprimaient ainsi, en un chant simple et symbolique jailli de leur foi en la liberté, leur espoir de redevenir libres un jour.

Ce jour vint enfin. En avril 1848 la Liberté leur fut apportée, précisément par cette même Seconde République dont Lamartine, votre ami, votre protecteur, disait qu'elle se donnait pour tâche immédiate de soutenir toutes les mino- rités opprimées du Proche Orient, dont les arméniens.

Pour ces hommes la montagne a re- verdi en ce printemps de leur esclavage. l'abolition définitive de leur montagne.

Pensant sans doute à votre montagne de l'Ararat, votre compatriote, le poète arménien Tchobanian a écrit lui aussi:

« Voici le feu qui renaît du néant;
Les cimes des montagnes rougissent;

.....
C'est l'heure douce entre toutes, c'est
Le reveil charmant de la vie ».

Il dit vrai. Un jour, sans doute, l'his- toire marquera la résurrection de votre Patrie.

Gardez confiance. Suivez les traces de vos aînés. Les peuples libres vous comprennent, vous suivent et vous aident.

Jeunes arméniens, restez attachés aux idées généreuses de liberté, de respect de la personne humaine, de mutuelle compréhension entre les hommes.

Et puissent un jour toutes les jeunes- ses du monde s'inspirer de ce même idéal; et réalisant le rêve exaltant de notre poète, Charles Vildrac, unis dans une même volonté d'amour, d'humaine compréhension, et de paix, se prendre par la main pour danser autour du globe la ronde fraternelle des hommes de bonne volonté.

Մեկնումը դէպի Փարիզ

Հանդէսին յաջորդ օրը, Մայիս 5-ին, յետ միջօրէի ընթացքով Նախագահը եւ իր ազնիւ Տիկինը մեկնեցան դէպի Փարիզ: Կայարան եկած էին ողջերթի համար Վե- նետիկի Գաւառապետը՝ Տոքթ. Փերուց- ցոյ, Ոստիկանութեան Գլուխը, Ֆրանսա- յի հիւպատոսը, Գերպ. Աբրահայրը, Հ. Եղիա Վ. Փէշեկեան, Հ. Մեսրոպ Վ. Ճա- նաշեան, Հ. Նիկողոս Քեհեայեան, ծա- նօթներ, ազգայիններ, որոնց բոլորին ալ ձեռքը սեղմելով լի յուզումով, կը բաժ- նուէր պատուական հիւրը:

ԽՄԲ.



Գ Ր Ա Ն Օ Ս Ա Կ Ա Ն

ԳՐԶԱՆԿԱՐՆԵՐ ՊԱՐՏԻԶԱԿ ԳԻՒՂԻՆ (Հեղ. Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ [Ա.Ա.], Փարիզ, 1950):

Ա. Ա. Պետիկեանի կողմէ հրատարակ- ուած 700 էջոց ստուար հատոր մըն է, որուն յառաջաբանին մէջ յարգելի հեղի- նակը կ'ըսէ թէ « դրի առած է զայն կէս դիւերներէն վերջ, դէպի առաւօտեան լուռ ու խաղաղ պահէրը՝ երբ քաղաքակրթու- թեան անտանելի ժխորը դադար կ'անէ »: Ու պարագաներու բերմամբ դրելէն տասը տարի վերջ միայն տուած է հրատարա- կութեան. սակայն ինք ուրախ է այդ յա- պաղումին համար, որովհետեւ « այդպէ- սով հետեւած եղայ, կ'ըսէ, իմ իմաստուն ուսուցչիս խրատին, որ եթէ օր մը դրի ու դրքի մարդ ըլլայինք, մեր պատրաս- տած դրքին ձեռագիրը տասը տարի կըդ- պանքի տակ պահէինք, տասը տարի վերջ դուրս հանէինք եւ զայն անգամ մ'ալ կար- դայինք մտքի հասունութեամբ ու դատաս- տանով... »:

Ուրեմն կրնանք վստահ ըլլալ որ «Գրք- չանկարներ Պարտիզակի գիւղին» ստուար հատորը հասուն մտքի մը լուրջ արտա- զրութիւնն է, մանաւանդ զրուած սահուն հայերէնով ու գեղեցիկ ոճով մը՝ որուն հաճոյքով եւ հետաքրքրութեամբ կը հե- տեւին ընթերցողները:

Պարտիզակը Նիկովիդիոյ ծոցին վրայ սիրուն գիւղ մըն էր, տասը հազար հոգիի բնակչութեամբ, զուտ հայերէ բաղկացած: Եթէ մէկը տեսած չէ զայն՝ անպատճառ- րած ըլլալու է անոր անունը: Պարտիզա- կէն երած են ազգային փայլուն դէմքեր, ի միջի այլոց նաեւ անուանի Մխիթար- եաններ, ինչպէս Հ. Յովհաննէս Վ. Թո- րոսեան, Հ. Վարդան Վ. Հացունի, Հ. Արսէն Վ. Ղազիկեան՝ մեղի ձգելով դրա- կան արժէքաւոր գործեր: Իսկ ներկայիս՝ Հ. Ղեւոնդ Վ. Տայեան, որ հսկայ գործի մը լծուած է Հայ եկեղեցական բոլոր շարականները եւրոպական նօթաներու վերածելով, եւ, ինչպէս կը լսենք, արդէն իսկ յանձնած է մամուլին: Հոս կ'արժէ համառօտ երկու խօսք ըսել այս մասին: Մեր սրբազան եղանակները իրաւամբ

մեղադրուող կը նկատուին, բայց երբ յարգելի Վարդապետը կ'երդէ՝ օրհնու- թիւնները խունկի ծուխին մէջէն դէպի երկինք կը բարձրանան բիւրեղի պէս յըս- տակ, թրթռուն, զուարթ ու զարդարուն, հիացում պատճառելով նաեւ օտար երա- ժրտասէրներու՝ որոնց անմատչելի են հայկական խաղերը, ինչպէս անմատչելի են հայերէս շատ շատերուն: Հ. Ղ. Վ. Տայեան, Մխիթարեան այս խոնարհ ու տիպար վանականը կէս դարէ ի վեր դա- նոնք երգելով եւ ուսումնասիրելով, այլ- եւս եղած է անոնց մասնագէտը, եւ ամէն առթիւ արուեստագէտի նուրբ ճաշակով կենդանի շունչ մը կու տայ անոնց անմահ հեղինակներուն, որոնց անունները հարիւ- րաւոր տարիներ վերջ տակաւին պարծան- քով կը յիշուին անխոր բոլոր հայերու սրտին մէջ: Իր այս դժուարին ու պատ- ուարեր աշխատանքով, որ բացի անձնա- կան զոհողութիւններէ պատկանելի դու- մարներ ալ կը պահանջէ, ինքն ալ արժա- նապէս դարերով պիտի յիշուի ո՛չ միայն Հայ սրտերու մէջ, այլ նաեւ երաժշտասէր օտար ժողովուրդներու մօտ, որոնք եւրո- պական նօթաներու միջոցով լայնօրէն ծանօթանալով հայկական հոգեւունջ եր- գերուն՝ պիտի զգան թէ Հայաստանեայց եկեղեցւոյ երգեցողութիւններն ալ Պետի- վէնեան քաղցր դրոշմ մը կը կրեն: Եւ ահա այս գեղեցիկ յաղթանակը, անթա- ուամ փառապսակով յաւերժացած, միջազ- դային դէմք մը պիտի դարձնէ յարգելի Վարդապետին անունը, կապուած Վենե- տիկի Մխիթարեան Միաբանութեան ու Պարտիզակի հետ:

Յաջողութիւններ մաղթելով յարգելի Վարդապետին՝ անցնինք մեր նիւթին:

Պարտիզակցիները ծանօթ էին Պոլսոյ հայկական շրջանակներուն մէջ իրեն խաւ մարդիկ, մասնաւորապէս իրենց առողջ Թիլիքականին, հաւատարիմ գործելակեր- պին եւ խօսակցութեան եղանակաւոր յա- տուկ չէտին համար, չէտ մը՝ որ երկար տարիներ գիւղէն դուրս ապրելով հանդերձ ընկեր կը պահէր իր ձայնի ելեւէջը, եթէ նոյնիսկ մեծ քաղաքներու մէջ միայն ին- տաճ ըլլար շալվարն ու եւմէնին, որոնք «պատնէշները եղած են գիւղին հոգիին», կ'ըսէ յարգելի հեղինակը, որ իր գեղեցիկ նկարագրութիւններուն մէջ անկեղծ ար- տայայտութիւն մը ունի գիւղին բնական

գեղեցկություններուն հետ նաեւ տղեղ տեսարաններուն հանդէպ, եւ իր կարօտի ուժգին խօսքով կ'ողբեւորէ ընթերցողը, որ իսկական ցաւով կը հետեւի տխուր պատմութեան յանձնուած երազային իրականութիւններուն:

Ամբողջ գիւղ մը տեղահան, բնաջինջ ու աւերակ...:

« Գիւղ մը՝ որ ուրիշ գիւղերու չէր նրմաներ, ըստ յարգելի հեղինակին, որովհետեւ ամէն գիւղ գիւղ է՝ գիւղի մը հասարակաց յատկանիշներով, բայց Պարտիզակը ունէր եղականութիւն մը որ պիտի զատէր զայն միւս գիւղերէն: Ծառ մը ծառ է ամէն տեղ, բայց մէշէի ծառը միայն Պարտիզակի մէջ կար: Այսպէս զանգակի ձայնը, որ ամէն զանգակատունէ կը լրսուի, Պարտիզակի զանգակին պէս չի կրնար արհամարհել ժամանակը եւ միջոցը, որ հազարաւոր միջոցներ հետեւ՝ մինչեւ այսօր կը լսուի: Գաղանիքը զանգակին մետաղին մէջ չէր, կ'աւելցնէ հեղինակը, այլ Պարտիզակին մէջ: Բաւական չէ զանգակ մը չինել ու զանգակատունէն կախել, այլ զանգակին հետ Պարտիզակ մըն ալ սրէտք է չինել, որպէսզի հնչիւնը հասնի մինչեւ Աստուծոյ ահանջին... »:

Ի հարկէ այս գրչանկարին մէջ գոյնեւորու չափազանցութիւն մը կը տեսնուի, բայց հետզհետէ պիտի համոզուինք որ այդ չափազանցութիւնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ անկեղծ սիրոյ ու կարօտի դրաշխուն արտայայտութիւն մը դէպի Պարտիզակն ու Պարտիզակցին:

« Պարտիզակը իր մէջ պարտէզ չունէր որ ծաղիկի հոտ ունենար, կ'ըսէ յարգելի հեղինակը, եւ ի՞նչպէս պարտէզ ունենար երբ փողոցները նեղ, տունները քիթ քիթ, կոնակ կոնակի էին, ո՞ւր կը մնար պարտէզի միջոցը...: Բայց ինչո՞ւն պէտք է ծաղիկի հոտը, ամէն տեղ ծաղիկի հոտ կայ: Պարտիզակի հոտը՝ միայն Պարտիզակի մէջ կար...: Այո՛, պարտէզ չունէր, բայց փուռներ ունէր. եւ Տուտուկն փուռը ինչո՞ւն էր ծաղիկատանի մը հետ չեմ փուռներ: Սեւ հաց արտադրող Տուտուկն փուռին առջեւ Աստուծոյ չունէր կը բուրէր... »:

Սա եւս ուրիշ պատկեր մը, որուն խորքին բնաւ պիտի չկարենան թափանցել քաղաքացիները, եթէ երբեք Տուտուկն փուռ-

ոէն ելած սեւ հացէն դոնէ պատառիկ մը կերած չեն...:

Իրօք ամէն բան սահման մը ունի, բայց յատկապէս Պարտիզակի մէջ ամէն բան անսահման է. միջավայրին, բնութեան, օդին ու ջուրին աղբեցութեան պէտք է վերագրել, աղբեցութիւն մը՝ որ յարգելի հեղինակը քառասուն տարի վերջ տակաւին կը կրէ իր սրան, ու աչքին առջեւ է միշտ « գիւղին պողոտան »՝ գերեզմանին ճամբան, որ կը ծառայէր իրեն ճեմեղաւայր կամ ցուցադրամայր, ուր իրիկնամուտին անոր վրայէն կը քալէին գիւղին խալնոտ աղջիկները, մաղերնուն երկար հիւսկէնները կոնակնուն ի վար կախ տըւած: Մանչերը աղջիկներէն աւելի խալնոտ էին: Այս գիւղին մէջ սիրարանութիւնը մեղք էր. ու սիրոյ հիւսկէնները միայն Պարտիզակի յատուկ էր: Աղջկան ու մանչու միջեւ երկչոտ ակնարկ մը պատմութեան նիւթ կը դառնար: — Աղջիկ, ո՞ւր էր ատ տղան, — հարցումին հետ կը ստեղծուէր իրական վէպ մը: Վերջապէս Գերեզմանին ճամբան Պարտիզակի ու Պարտիզակցիին համար մուտքն էր ու ելքը »:

Իսկապէս բնատուր ու գիւղի կեանքին հարադատ է նաեւ հետեւեալ գրչանկարը, որ կը ներկայացնէ մեղի հեղինակը. հոն կը տեսնենք որ « յուզարկաւորութեան մը միջոց արհեստաւորը դործը ձեռքը փողոց կ'իյնայ, խանութպանը իր յաճախորդին հետ դուռը կ'ընէ, սրճարանները կը պարպար հրմշտկելով կը քալեն մոմակալ տողոց դուռն կը թափին ուռեցնելով յուզարկաւորներու թափօրը, որ ծերունի Տէր Կալանայ... »:

Յուզարկաւորութեան տխուր արարողութենէն վերջ, յարգելի հեղինակը քիչ մը սրտերնիս չէնցնելու համար դուրսնայի մասին: Պատմելու եղանակը դրաւիչ է, եւ հետաքրքրութեամբ մտիկ ընելով սրբ-ստեղծուի միամիտ Պարտիզակցիին հանդէպ:

« Պարտիզակէն հազիւ երկու երեք միջոց անդին գիւղին դուռը՝ Իսկէլէն կար, ուր

կը գտնուէր Նշան աղբարին ձիերուն ախոռը: Թէ որ մէկը ձի հեծնելու փափաք ունենար՝ հոն կը դիմէր: Նշան աղբարը դործը գիտցող մարդ էր. — Օղորդ, կ'ըսէր իրեն դիմողին, կեցի՛ր մ'է ես քեզ ձիու մը վրայ նստեցնիմ որ տեսնես. ատանկ ձի Ստամպուլի վէպին ալ չէ նստեր... — Ու ի՞նչ կը քալէին այն խեղճ կենդանիները մեր տակը. դեռ օրօմօպիլ անունը չլսած՝ օրօմօպիլի պէս դործածել կ'ուզէինք դառնալ. բայց ձիերը ծեծէին աւելի՛ կը յոգնէին քան թէ վաղելէն: Ո՛չ կը քալէին, ո՛չ կը վաղէին, այլ անհաւասար եւ բնդհատ կը վաղէին, այլ ցնցէին: Ամէն ան-ստուամենքով մեզ կը ցնցէին: Ամէն ան-գամ ձի նստելէ վերջ կողի ցաւէ կը տառապէինք: Սակայն ուրիշ անգամ երբ հարկ ըլլար՝ դարձեալ Նշան աղբարին կը դիմէինք, որովհետեւ ան դիմէր իր ունեւ, ցած ձիերուն արժէք տալ... — Ահա՛, տէ՛, ատ կարմիր ձին կը տեսնե՞ս, ա՛ն պիտի տամ որ քեզ թոցնէ: — Զրուէն հեծ-ցրնելէ վերջ ձեռքերնիս ծառի ձիւ մը կու տար ու ճամբայ կը հանէր, խոշոր ափովը կենդանիին յետոյքին հարուած մը շառակնով ու քրֆրտոցով մը: Կենդանիները կարծես կը հասկնային իրենց տիրող լեզուէն ու կը վաղէին: Բայց քիչ վերջ փոխանակ իրարմէ անցնելու մրցումի՛րբ իր մատնուէինք: Քանի՛ կը հարուածէինք՝ կը մատնուէինք: Գիւղ ա՛յնքան վեր ու վար կը նետուէին: Գիւղ հասնելուն՝ Նշան աղբարին աչկերտը կը լսէր մեր գանդատներն ու անէճքները, լսէր մեր գանդատներն ու անէճքները, բայց կարճ ճամբով տակէն կ'ընէր, ըսե-լով. — Իրկուներ Նշան աղբարը գայ նը կ'ըսիմ... »:

Բնական է որ այսքանը գիտնալէս վերջ ո՛չ մէկերնիս պիտի ուզէինք այդ անտա-նելի ձիերուն վրայ հեծնել, ուստի աւելի լու է որ յարգելի հեղինակին առաջնորդութեամբ հետիտան շրջինք Պարտիզակի մէջ, որ քայլ առ քայլ դիմէ ճամբաները: ու մի առ մի կը ճանչնայ գիւղացիները:

Ահա՛ շուկան:

Զորին ուղղութեամբ քալելով հասանք եւմէնիի հնակարկատ Արթին աղբարին կրպակը, տանը դուռին մէջ բացուած ծակ կրպակը, տանը դուռին մէջ բացուած կարա-մը. յետոյ կարգաւ՝ անուշափառ Կարա-մի, զերծակ Սարգիսի, մտալմառ պետի, զերծակ Սարգիսի, մտալմառ Մկրտիչի, պայտհար Պետրոսի եւ նպա-Մկրտիչի, պայտհար Պետրոսի խանութներուն բախճառ Աւետ աղբարի խանութին վերա-առջեւէն: Ամէն խանութ արհեստին վերա-

բերեալ ապրանքներուն հոտը ունէր, որ խանութներով ձորին աղտեղութեան դար-չելի հոտին հետ՝ գլխու պտոյտ կը պատ-ճառէր. բայց եթէ մէկը յանդգնէր թաշ-կինակը քթին բռնել՝ առաջնորդնիս անոր ծուռ աչքով կը նայէր...:

Հետաքրքրական էր, ի միջի այլոց, նը-պարափաճառ Աւետ աղբարի խանութը, ուր հազարաւոր ճանճեր պատերուն վրայ ճերմակ բիծ մը չէին ձգած, եւ թառած պանիրի ու պահածոյ ձուկերուն վրայ հարսնիք կ'ընէին, մինչեւ իսկ Աւետ աղ-բարի քթին ծակերուն մէջ կը մտնէին ու կ'ելլէին, բայց անկա բոլորովին անտար-բեր էր այդ հակառողջապահի միջատնե-րուն հանդէպ, կը ձգէր որ անոնք ուղած-նին բնեն եւ աճին ու բազմանան, քանի որ Աստուած զրկած էր զիրենք իր խանութին մէջ անանելու համար...:

Եւ առաջնորդը գովեստով խօսեցաւ աստուածափախ Աւետի մասին:

Քիչ վերջ կանգ առինք Պարթեւ աղբարի սրճարանին առջեւ, որուն ցուցափեղկին մէջ ակոյց քաշելու քանի մը ժամգոտ աք-ցաններ կային: Առաջնորդը բացատրեց թէ Պարթեւ աղբարը միանգամայն գիւղին սափրիչն ու ատամնարոյժն էր: Զիշտ նոյն միջոցին մէկու մը ակոյցն կը քաշէր. մար-դը ցաւէն կը պոռար... ու վե՛րջապէս աքցանը բերնէն դուրս ելաւ: Պարթեւ աղ-բարը, հպարտ իր այս մարդասիրական գործով, արիւնոտ աքցանը առանց լուա-լու ցուցափեղկին մէջ շարտեց, զրպանէն կարմիր թաշկինակը հանելով ձակուէն վա-զող քրտինքը սրբեց ու դնաց ուրիշի մը մազերը խուղելու:

Պարթեւ աղբար ալ խղճամիտ էր ու բարի՝ ինչպէս մտալմառ Մկրտիչը, ու-րուն « խանութին առջեւ շարաթր մէկ եր-կու անգամ կատարուած խողխողական պաշտօնը, ըսաւ յարգելի առաջնորդը, կը յիշեցնէ Եսայիայ Մարգարէութեան յի-սուներեքերորդ գլխուն եօթներորդ համա-րին յուրիշ նկարագրութիւնը... », եւ շա-րունակեց. « Պարոն Մկրտիչը մաքուր մարդ է, սակայն մարդութիւն բնելով ի՞նչ պիտի հասկնանք: Վատանուն ձորը խա-նութին դրան տակէն կ'անցնի իր մատ-րոյրովը. խանութը տախտակամած չու-նի. սառնարանի գոյութեան երազն անգամ չկայ: Միտես որ կո կախէ խանութին ճա-կատը, եւ ձեռքը՝ ձիու պոչ մը, երբ պա-կատը, եւ ձեռքը՝ ձիու պոչ մը, երբ պա-

